

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 24 ՕԳՈՍ., 1929

ԹԻԻ 17

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՅՆ ՑՍԻԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՎԻՇՏԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

ԹՐԳ. ՏԻԿ. Ե. ԱՇՃԵԱՆ

ԻԳՍԿԱՆ ՍԵՌԸ ԵՒ ԱՆՈՐ ԴԵՐԸ

ՏԻԿ. Ա. ՇԻՐԻՔՃԵԱՆ

ԶՈՅԴ ՄԸ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Տ. Ճ. ԽՐԼՈՐԵԱՆ

ՖԱՐԹԸՍԼԻԻ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Կ. ԱԼԹՈՒՆՃԵԱՆ

ԲՆԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Տ. Ճ. Խ.

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

«ՏՊԱՐԱՆ ԴՈՒՔՃ» ՀԱՂԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կրօնաբարոյական, կրթական գիտական պարբերաթիւրթ.

Արտօնատէր

Վ. Լ. Կ. Յ. Յարութիւնեան

Տնօրէն—Խմբագիր

Տ. Ճ. Խրլորեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

Սուրիա, տարեկան 1.50 Սուրիական ոսկի:

Արտասահման, տարեկան 1.50 տոլար:

ԲՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԴԵՂԵՐԸ

Կարոս (քէր էվիլ օթը) շատ թանկագին սնունդ մ'է յօգացաւի ու է մէկ տեսակէն տառապողներու եւ ջղային հիւանդութիւն ունեցողներու համար: Հազարը (մարը) շատ օգտակար է քնատութենէ տառապողներուն համար:

Գետնապիստակը (եէր ֆըսթըղը, pea-nut) անմարսողութեան համար դարման մ'է. մասնաւորապէս յանձնարարելի է բազմամիզութեան համար (corpulent diabetes):

Սոխը ծանօթ լաւագոյն դեղն է ջըղային հիւանդութեան համար: Չկայ դեղ մը որ այսչափ օգտակար ըլլայ ջըղային ուժասպառութեան համար, եւ չկայ մէկը որ այսչափ արագօրէն դարմանէ եւ զօրացնէ մաշած կազմ մը: Սոխը օգտակար է ամէն տեսակ հաղեւը, պաղառութիւնը, ինֆլուէնզան, հիւսածախտը, քնատութիւնը, ջրալախութիւնը կամ կատաղութիւնը, աւազախտը, դարմանելու միջոցին: Սոխի ամէնօրեայ գործածութիւնը գոյնի մաքրութիւն եւ ճերմկութիւն յառաջ կը բերէ:

Սպանախը օգտակար է աւազախտի, իսկ ստեպղինը՝ դժուարաշնչութենէ տառապողներուն համար:

Բոզկը յարմար դեղ մըն է ջղային խանգարումներու համար:

Թարմ հասուն պտուղները սքանչելի դեղեր են արիւնը մաքրելու եւ մարմ-

նին ընդհանուր կազմը զօրացնելու համար: Նարինջները լուծողական են: Թթու նարինջները մեծապէս յանձնարարելի են յօգացաւի համար:

Կիտրոնը (լէմոն) յանձնարարելի է հիւանդութեան միջոցին պապակը (խիստ ծառաւ) անցնելու համար, ջերմի, յօգացաւի, հազի, պաղառութեան, լիարդի անհանգստութեան եւ այլնի համար:

Մուրը (black berry) կազդուրիչ (թօնքի) դեղ մ'է, եւ օգտակար՝ ամէն տեսակ փորհարութեանց պարագային:

Լոլիկը զօրաւոր մաքրողական մ'է լիարդի համար, եւ սքանչելի դեղ մը՝ դժուարամարսութեան եւ անմարսողութեան համար:

Թուզը մաքրողական եւ առողջարար դեղ մ'է: Կ'ըսուի թէ քաղցկեղէ (քանսէր) տառապողներուն համար լաւ սընունդ մ'է. թէ արտաքնապէս եւ թէ ներքնապէս գործածելի են:

Հում միսը տկարակազմ եղողներուն եւ հիւսածախտաւորներուն համար շատ օգտակար է:

Հաւկիթները նմանապէս շատ սնունդարար են: Հում հաւկիթին մէջ չաքարը լուծէ եւ գործածէ, ձայնդ զօրաւոր եւ յստակ պիտի դառնայ: Հաւկիթի ճերմկուցը շաքարի եւ կիտրոնի հիւսածախտէ եւ խմէ ձայնի խռպոտութեանէ ազատելու համար:

Մեղրը առողջարար է եւ զօրացուցիչ, մաքրող, բուժող, սնուցանող յատկութեամբ օժտուած:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԵՊ, 24 ՕԳՈՍ., 1929

ԹԻԻ 17

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՅՆ ՑԱԻԸ

Հայ Աւետ. Եկեղեցին պատերազմէն ստղին բոլորելու վրայ է իր պատմութեան բախտորոշ և վճռական մէկ շրջանը: Մեծ Պատերազմը, որ բոլոր ոչ խորհրդի իր հիմէն ցնցեց, իր քանդիչ ազդեցութեան բոլոր թափովը հայ կեանքը բնաջնջել թուեցաւ պահ մը: Այս մեծ փոթորիկէն հրաշքով աղատած հայ խնդակները պատերազմի վաղորդայնին բազմապիսի վէրքերով խոցոտուած յուսահատական երևոյթ մը կը ներկայացնէին: Սկեպտիկները իրաւունք ունէին հարցնելու՝ թէ արդեօք այս բեկորները պիտի կրնային հաւաքական կեանք մը վերստեղծել, իր այլազան մարզերուն մէջ: Եւ թէ այս վերահաստատման հրաշքայ աշխատանքին ուղղութիւն տուող, ոյժ և յոյս ներշնչող վարիչ ձեռք մը, ամենակարող հանճար մը, կեանքի նոր հիմնադիր մը երեւան պիտի գա՞ր արդեօք:

Ներկայիս, երբ մեր նախապատերազմեան երազները փշրուած են, տընտեսական կեանքը քայքայուած, կըրթական հաստատութիւնները իրենց նախկին հմայքէն զուրկ, ընտանեկան որբութիւններու և կրօնական ըմբռնումներու մասին հայ միտքը խախտած և քառսի մատնուած, մէկ խօսքով հայութիւնը այս պահուս, երբ նախապատերազմեան կեանքէն բաժնուած՝ նոր կեանքի մը սիմը ոտք կոխած է, տակաւին անոր կը պակսի նոր հիմնադիրը,

վարիչը, ուղղիչը իր այս յետպատերազմեան նոր կեանքին: Բայց ցեղին ստեղծագործող հանճարը, որ անշիջելի պահուած էր անոր խնդակներուն հոգւոյն խորքին մէջ, սկսաւ ցոյցնել իր կենարար ազդեցութիւնը օտար հորիզոններու տակ: Հակառակ յուսալքիչ բոլոր երևոյթներու ուրախութեամբ զիտելի է որ չափով մը կարելի եղած է տնտեսական անկախ կեանք մը վերստին կերտել, կրթական նոր հաստատութիւններ հիմնել, նորակազմ եկեղեցիներու մէջ կրօնական նոր կեանք մը վերստեղծել: Այսպէս վերահաստատումի հսկայ ջանք մըն է որ սկսած է եւ տակաւին կը շարունակէ ամէն տեղ:

Մասնաւորելով մեր խօսքը Հայ Աւետ. եկեղեցական կեանքին մասին, ուրախ և շնորհակալ սրտով մը պէտք է յիշել կատարուած յետպատերազմեան շինարար գործունէութիւնը: Այս գնահատական վերաբերումը, թէպէտ, մեզ չ'ստիպել անտես ընել անոր թերութիւնները, պէտքերն ու տկարութիւնները եւ այլն. այլ պարտք կը զնն մեր վրան երբեմն ուժգին կերպով ահազանգը հրնշեցնելու մէջը գտնուած իր վտանգաւոր կացութեան, թմրած ջիղերը ցնցելու առտիճան: Բայց այս պարտականութեան կատարումը պէտք է ըլլայ համակրալիք, շինարար և քրիստոնէական ոգիով լիցուն, այլ կերպով ան վերջապէս կրնայ յանգիլ պառակտումի և կործանումի մէջ:

Պուէնտ-Այրէսի Հայ. Աւետ. կեանքին տխուր պատկերը, որուն արձագանք

զը կ'ըլլանք այս թիւին լուրերու բաժնին մէջ, մեզի կը ներկայացնէ Հայ Աւետ. Եկեղեցիին ներկայ կացութեան մէկ մանրանկարը: Հոն Աւետ. Եկեղեցին երկար անախորժ քառուային վիճակէ մը վերջ երկուքի կը բաժնուի, մէկը կազմելով Հայ Աւետ. Ժողովական Եկեղեցին և միւսը՝ Հայ Աւետ. Եղբայրութիւնը: Կացութիւնը գրեթէ նոյնն է ամէն տեղ. այսօր ամէն տեղ Հայ Աւետ. Եկեղեցիին կողքին կայ Հայ Աւետ. Եղբայրութիւն մը: Կացութիւնը ալ այն աստիճանին հասեր է, որ ստիպողական կը դարձնէ անոր արդէն իսկ ուշ մնացած նկատառումը:

Այս կազմակերպութիւնը իր ծագման օրէն սկսեալ քննադատական և յարձակողական դիրք մը բռնած է Հայ Աւետ. Եկեղեցիին հանդէպ, միշտ մատնանշելով անոր ինկածութիւնը, տկարութիւնը, մոլորումը, թերութիւնները: Ասիկա պաշտօն մըն է որուն համար Աւետ. Եկեղեցին կրնար միայն շնորհակալութիւն յայտնել, եթէ ուղղամտութեամբ կատարուած ըլլար ան: Պէտք է ընդունիլ թէ Աւետ. Եկեղեցին, վերջին ազէտներուն պատճառաւ իր կենսունակութիւնէն, իր նպատակին փարումէն շատ բան կորսնցուցած է. այն ունի խոր վէրքեր, որոնք դարմանուելու համար պէտք ունին գուրգուրոտ ձեռքերու և ոչ թէ արհամարողներու: Մէկու մը թերութիւնը պէտք է նկատի առնել համակրանքով ոչ թէ անկէ օգուտ քաղելու դիտումով: Եղբայրութիւնը իր բոլոր օրկաններովը զօրաւոր փրօփականտ մը դած է և կը մղէ տակաւին Հայ Աւետ. Եկեղեցիին դէմ, ըսելով թէ անոր բոլոր քարոզիչները ուղղափառ դաւանանքէն մոլորած են, եկեղեցւոյ անդամները ինկած են, անոր պաշտամունքները իրենց ազդեցութիւնը կորսնցուցած են: Իրենց այս պնդումներուն մէջ այնչափ

յառաջ գալիս են որ անոնց մէջ շատ անգամ ատելութիւն, չարախօսութիւն, անճշդութիւն անպակաս եղած են: Եթէ այս քննադատական յարձակողական գործունէութեան նպատակն էր Հայ Աւետ. Եկեղեցին զօրացնել պէտք է Եղբայրութիւնը իր նպատակին մէջ ձախողած նկատել, բայց եթէ անոր շարժառիթը պառակտում մը, նոր եկեղեցի մը յառաջ բերել է յաջողութիւնը պէտք է ապահովուած սեպիւ:

Պէտք է տնկեղծօրէն ընդունիլ թէ Եղբայրութիւնը պատճառ եղած է շատ մը հոգիներու փրկութեան, որուն համար պէտք է ուրախ ըլլալ: Պէտք է նոյնպէս խոստովանիլ թէ Հայ Աւետարանական հասարակութեան մէջ հոգեւոր կեանքը վառ պահելու մէջ Եղբայրութիւնը իր մասնաւոր բաժինը ունեցած է, որուն համար պէտք է շնորհակալ ըլլալ: Եւ թէ վերջապէս պէտք է ընդունիլ որ կրօնական կեանքը կարելի չէ եկեղեցւոյ սահմաններուն մէջ միայն արտայայտել, թէ ան բազմազան երանգաւորումներ ունի, թէ եկեղեցիէն դուրս կրօնական ընկերակցութիւնները և հոգեւոր եղբայրութիւններն նաեւ կըրնան փրօստոսի Թագաւորութեան ծառայել և եկեղեցին զօրացնել: Բայց հետեւեալ կէտերն ալ կ'ուզենք հասարակութեան անաչառ գատողութեան յանձնել:—

1. Եղբայրութիւնը տակաւին կը շարունակէ իր վարկարեկիչ փրօփականտը Հայ Աւետ. Եկեղեցիին դէմ:

2. Աւետ. Եկեղեցիէն իրապէս բաժնուած է տն, յաճախ չմասնակցելով անոր պաշտամունքին, մերժելով անոր հաղորդութիւնն ու մկրտութիւնը, զլանալով անոր իր նիւթական աջակցութիւնը, եւ եկեղեցին նկատելով միայն հաստատութիւն մը պսակ, թաղում կա-

տարելու եւ նպաստ բաշխելու համար:

Յ. Եղբայրութիւնը չընդունիր Հայ Աւետ. Ժողովական Եկեղեցւոյ հիմնական սկզբունքներէն ոմանք, որոնց վերայ անդրադառնալու առիթը ունենանք թերեւս:

Արդ, Եղբայրութիւնը աւելի անկեղծ եւ քրիստոնէական գիրքի մը մէջ պիտի գտնուէր յայտարարելով պաշտօնապէս թէ ինքը Հայ Աւետ. Ժող. Եկեղեցիէն զատ աւետարանական համայնք մըն է, իր որոշնպատակով, քաղաքականութեամբ եւ ըմբռնումներով, եւ չզփոթէր տգէտներուն միտքը ըսելով թէ ինքը զատուած է եկեղեցիէն, թիրեւս ըսելու զելով թէ ժողովական համայնքն է որ զատուած է եկեղեցիէն:

Պիտի համարձակի՞նք արդեօք:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՎԻՇՏԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ

Վիշտը կեանքի մէջ այնպիսի փորձառութիւն մ'է, զոր ամէն մարդ ուշ կամ կանուխ անպատճառ պէտք է ապրի: Անկեղծ մէկ մասն է երկրային կրթութեան, որ մեզ կը պատրաստէ երկնային փառքի համար: Մեր Տէրը ինքը այս ճամբէն քալել է, եւ տառապանքներու միջոցաւ կատարելութեան հասել է (Երբ. 5. 8-9, 2. 10): Մեզի, Անոր հետադարձութեամբ ալ այս տառապանքի ուղին սահմանուած է, եւ Գործք. 14. 22ի մէջ յայտնուած է որ շատ մը նեղութիւններ կրկնով պէտք ենք Երկնքի Թագաւորութիւնը մտնել: Միայն դառնասակներն են որ անծանօթ են այս տառապանաց արարողութեան: Վշտի լիզուն օտար մէկն է անոնց համար, եւ Ս. Գրքի սփոփարար խօսքերը անծանօթ են անոնց համար, իրր թէ անտեսանելի մեղանով զրուած ըլլային անոնք: Բայց երկար ատեն ասպէս չի շարունակիր: Տարիները անոնց համար ալ ցաւեր պի-

տի բերին: Որոնց սաստիկ բացերուն տակ կրօնքի շնորհած մխիթարութիւնները Աստուածաշունչին էջերուն վրայ պիտի փայլին:

Անգամ մը երկաթուղիի պաշտօնեաները ցերեկ ատեն բոլոր կառքերու լոյսերը վառեցին: Ճամբորդները չկրցան հասկնալ թէ ինչու վառեցան այս լոյսերը, որոնք կէսօրուայ արեւին ցոլքերուն տակ այնքա՛ն տկար կ'երեւային: Բայց քիչ վերջը երկար եւ շատ մութ փապուղի մը (թունէլ) մտանք, որուն մէջ լամբերու լոյսերը շատ փայլուն կը տեսնուէին, եւ բոլորնիս ալ շնորհակալ եղանք որ այս լոյսերը առաջուց վառեցան: Այդպէս ալ երիտասարդութեան շողոքուն օրերուն, մեր ուրախութեան վայրկեաններուն, Գրիստոսի մեր սրտին մէջ դրած մխիթարութեան նշոյլները թէպէտ մեզի տկար եւ աննպատակ կը թուին, անոնք երկնային փառքի ցոլքերով կը փայլին երբ տառապանքի եւ վիշտի մութ ամպերը մեզ կը շրջապատեն: Բայց ի՞նչ պիտի ընենք մենք, եթէ Աստուծոյ Խօսքին լոյսերը մեր սիրտին մէջ վառած չեն:

Քրիստոնեան տեսակ տեսակ մխիթարութիւններ ունի: Սիրտը երկրային խնդութեամբ լիցուած մէկը երբ իր այս ուրախութեան մէջ խաբկանքի ենթարկուելի, այն ատեն յաճախ իր աչքերը կ'ուղղէ դէպի յաւիտենականութիւն եւ անտեսանելի իրերը: Կան շատեր ալ, որոնք չեն կրնար Քրիստոսը տեսնել մինչեւ որ իրենց համար շատ սիրելի եւ թանկագին բան մը իրենցմէ չաճնուի: Անոնք միայն այն ատեն, երբ մութին մէջէն դէպի երկինք կը նային, կրնան դիտել սիրով եւ գութով իրենց բացուած երկինքը: Բանաստեղծ մը սապէս կ'ըսէ. «Մենք պէտք է սորվինք, առանց շրջած աչքերու, Աստուծոյ դէմքէն ճառագայթող սէրը դիտել՝ մեր վիշտի արցունքներով թրջած ակնոցնե-

րուն մէջէն: Երկիրը շատ մութ է, իսկ երկիրնքը՝ շատ լուսաւոր»:

Քրիստոնեայ սրտի մը ամենաանուշ ուրախութեան մեծ մասը այն երգերն են՝ զորոնք սորված է վիշտի դառնութիւնը ճաշակած առին: Կը պատմուի թէ պզտիկ թռչուն մը իր տիրոջ իրեն սորվեցնել ուզած երգերէն ոչ մէկը չսորվեցաւ երբ իր վանդակը լուսաւորուած էր: Պզտիկ թռչունը մտիկ կ'ընէր, մաս մը այս երգէն, միքանի բառեր այդ երգէն կը սորվէր. բայց չկրցաւ լաւ հղանակ մը սորվիլ: Ապա անոր տէրը վանդակը թանձր ծածկոցով մը ծածկեց, կըրկին ու կրկին երգեց այն երգը զոր կ'ուզէր սորվեցնել, մինչեւ որ անոր փոքր հագագը եղանակով ամբողջութեամբ կը լեցուէր: Եղանակը այս կերպով սորվեցնելէ վերջը ծածկոցը կը վերցնէր, թռչունը ա'լ լոյսի մէջ ալ կրնար երգել: Շատ անգամ մեր սիրտերն ալ ճիշդ այս թռչունին կը նմանին: Մեր Տէրը կ'ուզէ մեզի եղանակ մը սորվեցնել. բայց մենք չենք կրնար զայն լման սորվիլ: Եւ զայն կ'երգենք ամոր խառնելով երկրային եղանակներ եւ աշխարհիկ երգեր: Ապա Տէրը կուզայ վիշտի թանձր ամպերով մեզ կը շրջապատէ, որպէսզի իր սորվեցնելիք անուշ երգերը ամբողջութեամբ սորվինք: Սաղաղութեան, վստահութեան եւ յոյսի երգերուն ամէնէն անուշը եւ մեծագոյն մասը, զոր Աստուծոյ սրբին այս աշխարհին մէջ կ'երգէ, վիշտի մութ եւ լուռ խուցերուն մէջ սորվուած են: Շատ մը քրիստոնեաներուն իրենց մէջ ունեցած աւելի նուրբ եւ աւելի լաւ ընդունակութիւնները, ծանր փորձանքի մէջ, պաղ, աշխարհիկ եւ անոցի եղած ժամանակներն, իրենց սիրտերուն մէջ թագնուած կը կենան, ինչպէս որ ձմեռատեն լերկ ծառի մը մէջ պահուած կը մնան գեղն ու բոյրը: Բայց անոնք այս ծանր փորձանքէն դուրս կուգան հեղհոգիի մը ճոխութեամբ եւ շնորհալի բը-

նայթի մը անուշութեամբ օժտուած, չորս կողմ սփռելով իրենց շնորհքի բոյրերը: Լուսանկարիչը իր նկարները մութ սենեակը կը տանի, որպէսզի անոնց վրայ հոն աշխատի, որպէսզի լոյսը անոնց նրբութիւնը չ'աւրէ: Աստուած ալ շատ մը հոգիներու մէջ անոնց է'ն շնորհալի գեղեցկութիւնը դուրս կը հանէ, մինչ զանոնք կ'առաջնորդէ վարպետրով ծածկուած եւ օրուան լոյսէն զրկուած վիշտի խցիկները: Մութը Աստուծոյ բարկութիւնը չէ, այլ Անոր սիրոյ թեւերուն շուքը, երբ Ան՝ մեզի էն մօտ դառնուած մէկ վայրկեանին՝ մեր հոգիներուն կը վերհալի, անոնց մէջ իր արտագրել ուզած պատկերին մէկ նոր գեղեցկութիւն մը աւելցնելու համար:

Վիշտերը երբ կը որբագործուին կեանքի դառնութիւնները կ'ամօքեն, վայրենի բնոյթը կը կրթեն, կիրքերը կը զսպեն, անձնատիրութեան եւ աշխարհատիրութեան աղտերը կ'աչրին, դոժողութիւնը կ'անհետացնեն եւ մարդերուն կը ցուցնեն իրենց սիրտերը, տկարութիւնները, թերութիւնները եւ վտանգները: Վիշտերը համարուածիւն եւ անձնտիրութիւն կը սորվեցնեն, անկարգ եւ աղմկայոյզ հոգիները կը հնազանդեցնեն: Անոնք մեր փորձառութիւնները կը խորունկցնեն եւ կը զօրացնեն: Երկնային մշակը մեր սրտերուն կարծր հոգը կը հերկէ, երկար եւ խոր աւօսներ կը բանայ եւ արգարութեան պտուղները յառաջ կը բերէ:

Ըսուած է թէ, նոյնիսկ ամէնէն քաղցրաբարոյ մարդուն մէջ, ամէնէն ուշ եւ ամէնէն լաւ հասունցող պտուղն է քաղցրութիւն՝ կարծրասրտերու հանդէպ, հաւրքերութիւն՝ անհանգուրժելի մարդերուն հանդէպ, սիրալեռն վերաբերում պաղ անհամակիր մարդերու հանդէպ, եւ վարդապետութիւն՝ տմարդիներուն հանդէպ: Վիշտէն զիտ ուրիշ ոյժ մը չկայ որ այս պտուղները շուտով կարենայ յառաջ բը-

րեւ: Ան մեղ քաղցրութեամբ կը լեցնէ բոլոր աշխարհին հանդէպ: Ան ամէն կոշտ զգացումը կը կակուղցնէ եւ սիրտը կը լեցնէ համակրութեամբ, քաղցր սիրով և բարեկօրծական տրամադրութեամբ: Շատ մը ընտանիքներ ցրուելէ փրկուած են վիշտի մը միջոցաւ և օտարացած սիրտերը դարձեալ իրարու քով եկած են: Վիշտը շատ մը սառնասիրտ մարդերը ճմլած և զանոնք համակրանքով և քաղցրութեամբ լեցուցած է:

Լուսնակը Թրղմ. ԵՍԹԵՐ ԱՇՃԵԱՆ
(Շարունակելի)

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԸ ԵՒ ԱՆՈՐ ԿՐԾՆԱԿԱՆ
ԴԵՐԸ ՏԱՆ ՄԷՋ

(Եւր. Ասիտորդ թիւհն եւ Վերջ)

Վերնագրիս կեղբորնական խորհուրդը տան մէջ ի պական սեռի կրօնական գեղին շուրջ կը դառնայ: Մարդու նկարագրին կազմութեան մէջ չատ տարրեր — զարոյց, մամուլ, եկեղեցի, ընկերութիւն — ձեռք ձեռքի տուած կը գործեն. սակայն ո՞վ կրնայ չափել մօր մը տնական ազդեցութիւնները որ ամէնէն աւելի նուիրականն ու ներշնչիչ է: Ուստի ճիշդ ու յարմար ժամանակը չէ՞ որ մենք մեր գիրքն ու կոչումը հասկնանք: Վերոյիշեալ նշանաւոր կանայք իրենց կարգին այս կոչումը լիովին կատարելով անցան զացին: Կարգը մերն է: Եւ միթէ դարերու մէջէն չ'արձագանգելք անոնց ձայնը յիշեցնելու մեզի մեր բարձրագոյն իտէալը: Այլ ևս ժամանակը հասած է որ մայրերու և աղջիկներու մէջ կրօնական վերագործում (Renaissance) մը սկսի: «Բանցի ստեղծուածոց եռանդուն ակնկալութիւնը Աստուծոյ որդւոյն յայտնուելուն կոպտակէ»: Եւ Սաղմ. 68. 11ը յատկապէս կանանց մասին գրուելով սապէս կըսէ. «Տէրը պատգամ տուաւ, աւետիս տուող կիները բազմութիւ են:» Տէրը տակաւին պատ-

զամ կուտայ : Ո՛հ, ո՞ր են աւետիս
բերող կիներո՞ւ րազմութիւնը : Նա նա-
խասանմանած է որ պատգամը լսող ա-
մէն կին աւետիսը տարածէ

Կիրնը եթէ իբր մարդ պիտի ապրի,
եթէ մայրերը պիտի մասնակցին ընկե-
րային շարժումներու, անհրաժեշտ է որ
անոնք ընդունին բարոյական և կրօնա-
կան բարձրագոյն կրթութիւն: «Ինչ
ընեմ Ֆրանսայի օգտին համար», հար-
ցուց Նափոլէոն Մատամ Սթալին: «Տուր
մեզի, Տէր իմ, մայրերու սերունդ մը»
պատասխանեց իմաստուն կիրնը Մենք
այս հարցումին պատասխանենք. «Տուր
մեզի Քրիստոնեայ մայրերու սերունդ
մը:»

Շատ քիչ է ծնողքներու թիւը՝ որոնք լրջօրէն կը մտահոգուին իրենց զաւակներու իրօնական դաստիարակութեամբը։ «Ամերիկայի լրջամիտ առաջնորդները խորապէս համոզուած են թէ ազգին քաղաքական և բարոյական կեանքին ապահովութիւնը կախեալ է ոչ այնքան զպրօցէն կամ եկեղեցիէն որքան տունէն։ Ներկայ ընկերութեան խառնաշփոթութեանց և բարքերու ապականութեանց սկզբնական պատճառը տնոնք կը գտնեն ու իրողութեան մէջ թէ տունը իր բարձունքէն ինկած է, և ամէն կողմէն այս ահազանգն է որ կը հնչեցուի ամերիկեան ժողովուրդին կականջին թէ իբր տունը կ'ընայ ազգն մէկտեղ կ'ընայ»։ Յաւալին այս է թէ ազգովին մեր անկումին պատճառը դեռ գտած չենք։

Կը խորհրմ թէ հետեւեալ երկու բանե-
ւէն մեծապէս փառաւած ենք: Առաջինը
լնդհանուր գաղափար մը սպրդած է մեր
մէջ թէ ազգին անկումը, ընտանեկան
անհամաձայնութիւնները, նոր սերուն-
դին ապստամբութիւնը ժամանակի փոխ-
ուելուն արդիւնքն են: Մեր ամբողջ
ընթեալը կը բողբենք այս գաղափա-
րին դէմ: Միթէ ժամանակը փոխողը
մարդը չէ՞: Երբ ազգի մը մէջ բարոյա-

կան զսպանակի թուլացում մը յառաջ եկած է պիտի տեսնենք որ ա՛լ անոնք սրբավայր մ'ըլլալէ գաղթած են. մայրերու ներշնչումները ապականած ու թու՜նաւորուած են: Վերցուր մօր մը սրբութիւնը՝ ընտանիքը, միջավայրը և ազգը կործանած կ'ըլլան»: Սակայն իր գիրքը ու աւժանիքը ճանչցող կին մը Ած. ոյ յիշատակը, սիրոյ հրեշտակը, բարութեան պահապանը, երկնային խորհրդատու, երկրին օրհնութիւնն է»: Ուստի նափոխներն ըսածը կ'եկրորդենք. «Մեր մայրերը ազգին բարեբազուկութեան գաղանիքներն են»:

Երկրորդ կէտն է շփոթել բարոյականը հոգեւորին հետ: Բարոյականը մեզ միայն մարդոց շահերուն և բարօրութեան համաձայն կը ղեկավարէ: Բայց մենք ունինք հոգեկան աշխարհ մըն ալ ուր մեր Արարչին հետ ալ համաձայնիլ պէտք ենք: Փրօֆ. Պալեօգեանի տողերը յիշատակելի են. «Բարոյականը ինքնին զովելի է, սակայն նա միայն նախագաւթն է հոգեւոր կիտնքի տա՜ճարին, ուր Աստուած չուզեր որ աչնցընենք մեր թանկագին կեանքը. այլ մշտնէնք Սրբութիւն Սրբութեանցը ու հոն վայելենք իր ներկայութեան և հպումին խանդավառող ներշնչումը անով կատարեալ ապրելու մեր բարոյականն ալ: Կեանքը իր իտէալ բարձրութեան մէջ տպրիլ կարենալու համար անհրաժեշտ է մշակել հոգեպարտ»: Եթէ իսկապէս մեր գերագոյն պէտքը բարոյական ըլլար բացարձակապէս հարկաւոր պիտի չըլլար Յիսուսի գալուստը:

Էական հարցումը սա է թէ Հայ կին մը իբր մայր ի՞նչ պէտք է ընէ որ այս վնասներէն ազատ՝ գարեւոր միջոցին անհաւատութեամբ և անբարոյականութեամբ վարակուած սերունդին ցուը տա՞նք: Ի՞նչ է մեր դարմանը: Մենք ալ Ամերիկացիներու պէս կը համոզուինք վերջապէս թէ մեր դարմանը՝ տան մէջ

նոր սերունդին կրօնական դաստիարակութեան մէջ կը գտնուի:

Ուստի սա մի քանի պարզ թելադրութիւնները ձեզի հաղորդելով խօսքիս վերջ տալ կուզեմ.—

Առաջին. պատրաստու ինք իմաստուն և Բրիտոնեայ դաստուռ մ'ըլլալ մերիններուն, որոնք կամայ ակամայ մեր ներշնչումներով ազդուին: Ստեղծ ե՛նք այնպիսի միջավայր մը որուն վերացուցիչ սզգիցութեան առջև սկեպտիկն իսկ լռէ, ու երբ օտար ազդեցութիւններ մեր սիրելիները մեղմէ խելու փորձ մը կատարեն, թող անոնք գտնեն մեզ քրիստոնէական զրօշը պարզած՝ իրենց դէմ մաքառելու պատրաստ:

Երկրորդ. ղեկավարենք մեր տան մէջ խօսակցութեանց նաւերը, որոնք միշտ ուրիշներուն թերութիւններով բռնաւորուած բամբասանք կը կրեն հայ օճախներու պատուհանէն ներս: Մտնենք խելու այդ տեղի խօսակցութիւնը և պիտի գտնենք որ բարեկամները, դրացիները, աւելի ցաւալին, բոլոր կրօնականները, մեր մանուկներուն դաստուռները թերութիւններու ցիւխին մէջ կը թաղուին ու գատապարտութեան կախաղանը կը հանուին: Եւ երբ յաջորդ օրը մեր անմեղ զաւակները անոնց մասին անպատուութեամբ խօսին մեծ զարմանք կը յայտնենք: Զգոյշ ըլլանք և մեր մանուկներուն գայթակղութեան պատճառ չըլլանք: «Վերջապէս ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութեամբ, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքինութիւն և ինչ զովութիւն որ կայ, այն բանիւր խորհեցէք»:

Երրորդ. դրոշմենք մեր մանուկներուն հոգւոյն վրայ թէ «կրօնքն է առաքինութեանց միակ անառիկ միջնաբերդը. որովհետեւ ունէ փորձութիւն կրնայ կործանել սոսկ բարոյականութեանց

պատուարը»։ Մարդկութեան բարեկաման և բնաշրջման միակ ուզին մանուկները ուզիդ մեծցնելու մէջ կը կայանայ։

Ուստի այնպէս կրթենք մանուկները իրենց ճամբուն սկիզբը, որ երբ մանկական երազներուն յաջորդեն կեանքի հոգերը, տակաւին սկզբնական դրոշմը այն սրտերու վրայ հաստատ մնայ։ Նոյն ժամանակ ծնողական տիպար կեանքով այնքան աշխտւոյ՛ ինչ որ անոնց Բրիտանիական նկարագրի կերտումին, մինչև որ մեր տունը հաւատքի ու սիրոյ կալուածը դառնայ։ Եւ այն տաւին Արդիականութեան քանդիչ վարդապետութիւնները և անբարոյակամութեան թունաւորիչ հովերը մուտ չպիտի կրնան գտնել հոն։

Զորորդ. անգղար վառ պահենք ընտանեկան սուրբ կրակը, հին Հռովմայեցւոյ Վեստեան կոյսերուն պէս։ Պատեհութիւն տանք մեր մանուկներուն զիտի մեր հառաչանքներն ու աղօթքները իրենց համար։ Անոնց փրկութեան համար արիւն ալ թափել հարկ ըլլայ չը վարանինք։ Թող մեր ծուռկերուն չինած փոսերը ու մեր արցունքներուն ծովը անմուտնալի յիշատակնիւր ըլլան անոնց։ Մօր մը կրօնական աշխարհը չօճափիլ թող ըլլոյ անոնց մտքին ու հոգւոյն։ Եւ ահա այն տաւին «մեր սրգինները իրենց երիտասարդութեանը մէջ տունկերու պէս մեծնան ու մեր աղջիկները պալատի շէնքին համար փորագրուած անկիւնի քարերու պէս ըլլան Սաղմ. 144. 12»

ՏԻԿ. Ա. ՇԻՐԻՖՃԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ՀԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ՄԸ

Շիզակոյի ճարտարարուեստի Թանգարանը, որ պիտի լրանայ 1933 ին, իր նմաններուն մէջ եղական գիրք մը պիտի գրաւէ։ Թանգարանի շէնքը մի-

այն պիտի արժէ հինգ միլիօն տոլար, և պիտի ըլլայ 1893 ի Տիեզերական Ցուցահանգէսին Գեղարուեստի Շէնքին ճիշդ մէկ ընդօրինակութիւնը։ Թանգարանի հաւաքածոյին համար պիտի ծախսուի 30 միլիօն տոլար։

Այս թանգարանին մէջ պիտի պատկերացուի ճարտարարուեստի մէջ կատարուած յառաջդիմութիւնը։ Հինէն սկսեալ կատարուած ամէն մէկ նոր գիւտ և մարդկային կեանքին վրայ անոր ունեցած ազդեցութիւնը, կատարած փոփոխութիւնները, յառաջ բերած ընկերային վիճակը ժամանակադրական կարգով պիտի տեսնուին այցելուններուն կողմանէ։ Զոր օր. ոչ միայն պիտի ցուցադրուի առաջին նորագիւտ վերամբարձը (ասանսէօր)ը այլ նաեւ թէ ինչպէս ան շէնքերուն վրայ ազդեց և յառաջ բերաւ երկնասլաց շէնքերը։ Նմանապէս պիտի ցուցադրուի առաջին բամպակ մաքրող մեքենան, և անոր յառաջ բերած մեծ ազդեցութիւնը Հարաւային նահանգներու նախնական կեանքին մէջ, աշխատաւորնիւրու մեծ պահանջ մը ստեղծելով, և գիւրիներու ներածումին պատճառ դառնալով։

Յառաջգիմութեան այս պատկերը, գիւտը և մարդուն վրայ ունեցած իր ազդեցութիւնը, հաստատութեան պիտի ներկայացուի՝ ցուցադրելով հնարուած առարկաներու և գործիքներու նմոշները, հին և նոր կեանքի պատկերները թէ իրական և կենդանի կերպով և թէ յաճախ լուսանկարներով՝ շարժապատկերի միջոցաւ։ Երբ գիտուն մը նախնական գիւտերու մասին պիտի խօսի՝ չափ մը ճարպիկ մարդիկ պիտի վերապրին 40000 տարի առաջ ապրող որսորդ մարդերու կեանքը կամ պիտի բեմագրեն Զուլցերիոյ լիճերը ձողերու վրայ շինուած բնակարաններու մէջ ապրող մարդերուն կեանքը։

Ուրիշ տեղ մը երկաթուղիի կառք մը

պիտի զրուի որուն տարբեր մասերէն իւրաքանչիւրը պիտի ցուցնէ շոգեկառքի զարգացման տմէն մէկ շրջանը: Առաջին բաժնին մէջ գուն պիտի ապրիս 1840ը երբ շոգեկառքը իր նախնական վիճակին մէջ էր: Եւ երբ անոր պատահաններէն զուրս նայիս ճիշդ այդ տակնուան կեանքը, զիւզը, քաղաքը ներկայացնող պատկերներ պիտի գտնես: Վերջին բաժինը պիտի ըլլայ արդի ննջարան վախճանը, որուն պատահաններէն զուրս պիտի տեսնես ներկայ կեանքին տեսարանները:

90 ոտք երկայնութեամբ փոլոց մը պիտի շինուի, նման ապէս մասերու բաժնուած, ցուցնելու համար տարբեր շրջանները: Երկու վայրկեանի մէջ 300 տարուան կեանք մը պիտի ապրիս: Առաջին մասին մէջ պիտի տեսնես Եզրսոսթէթ Թագուհիին տակնուան Լոնտոնի փողոցը, որ Լոնտոնցի պարոն մը աթոռ մը նստած, ցեխերու մէջէն ջահակիր մարդերու միջոցաւ դէպի իր տունը կը տարուի. յարմար կոյուղիներու եւ լաւ ջրաբաշխական ցանցի մը բացակայութիւնը ուշադրութիւն պիտի զբաւէ: Վերջին բաժնին մէջ մերօրեայ փողոցը պիտի ներկայացուի:

Թանգարանին ուրիշ բաժնին մէջ պիտի ցուցադրուի շոգեմեքենայի հնարուումը Ճէյմս Ուաթի կողմանէ, եւ անոր միջոցաւ յառաջ եկած աշխարհի մեծագոյն յեղափոխութիւնը, «Ճարտարարուեստական յեղափոխութիւն», որ ընկերային եւ տնտեսական կեանքը արտակարգօրէն կերպարանափոխած է: Շատ մը պատկերներ եւ քարտէսներ պիտի ցուցնեն թէ ի՞նչպէս ամխահանքերու քով ճարտարարուեստական քաղաքներ ծաղկեցան, ասանց մէջ ի՞նչպիսի ընկերային հարցեր ծագեցան, զորոնք լուծելու համար մանրէաբանական, բժշկական եւ ճարտարագիտական բոլոր ոյժերը անհրաժեշտ դարձան: Այցելուն

սա զապափարը պիտի ստանայ թէ Ճէյմս Ուաթ մեծ հնարիչէ մը աւելի բան մ'էր, թէ ան երկրիս երեսը կերպարանափոխելու եւ ընկերային հաստատութիւնները ձեւելու մէջ Մեծն Աղեքսանդրէն եւ Նափոլէոնէն աւելի բաժին մ'ունեցած էր, եւ թէ պատմութիւնը կը շինուի այնչա՛փ զիտական աշխատանոցներու մէջ, որչափ որ ռազմադաշտի վրայ:

Ուրիշ բաժնի մը մէջ պիտի պատկերացուի քիմիական զիւտերը եւ կեանքի վրայ ունեցած անոնց փոխակերպիչ ազդեցութիւնները: Գերմանիոյ մէջ սեւ ձիւթի յարարերութիւնը ճարտարարուեստի զարգացումին հետ, Ֆրանսայի մէջ տորոն*ի (սրմատ մը, որմէ կարմիր ներկ կ'արտադրուի) եւ Հնդկաստանի մէջ լեզակի (չիվիտ) տունջութիւնը արնտեսական կեանքի հետ պիտի տեսնուի հոն:

Շատ երկար պիտի ըլլար մէկիկ մէկիկ թուել բոլոր բաժնիները: Բայց այսքանը բաւական է ցուցնելու թէ այս հաստատութեան կրթիչ արժէքը որչա՛փ մեծ է: Պատմութեան, ընկերարանութեան, տնտեսագիտութեան, գիտութեան զանազան ճիւղերուն ուսանողները, ապագայ հնարիչները որչափ լոյս եւ ներշնչում պիտի ստանան իրենց աշխատանքին համար:

ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՒՉԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Բաքֆէլլըի անունով մկրտուած այս զիտական հաստատութեան մէկ մասին մէջ շատ մը կենդանիներ պիտի տեսնուին, որոնք հիւանդութիւններու դէմ պայքարելու համար կը գործածուին զիտուններու կողմանէ: Անոնցմէ ոմանք յիշիլ հետաքրքրական է թերեւ:

* Տորոն Ֆրանսա մտաւ Յովհ. Ալթունեան (JEAN ALTYN) անուն հայու մը միջոցաւ, որուն ի պատիւ արձան մը կանգնած է երախտադէտ Ֆրանսան:

Կեղծմաշկ (տիֆթէրիա)ի դէմ պայքարելու համար զամբիկները կը հայթայթեն շիճուկ մը, որ այդ հիւանդութեան իբր կեղծածը կը գործածուի: Զի մը մէկ աարուան մէջ 1000 մանուկները կեղծմաշկէն ապահով պահելու բաւական շիճուկ կ'արտադրէ: Վերջին 10 տարուան միջոցին այս հիւանդութենէ մեռնողներուն թիւը հազարի մէջ 16էն 1.1ի իջած է:

Կապիկի որոշ մէկ տեսակը կը գործածուի քնախտը եւ խեղապատարորը (մէնինճիթիսի) զարգացումը եւ դարմանումը ուսումնասիրելու համար:

Շաքարախտի դէմ գործածուող միակ դեղն է ինսուլին, որուն բաղադրութեան բաղադրուցիչ զլխատը տարրը կը հայթայթէ ընտանի խոզը:

Նապաստակները կը պատրաստեն զեղին տենդը զարմանելու համար շիճուկ մը, որուն շնորհիւ կտրելի եղած է արեւմտեան կիսագնդէն արտաքսել այդ հիւանդութիւնը:

Օձերը թունաւորումները բուժելու համար շիճուկներ կը պատրաստուին:

Բոլոր այս շիճուկները պատուաստուած կենդանիներու արիւններ են, զորոնք մասնաւոր միջոցներով անոնց երակներէն կ'առնեն:

Կենդանիները կը գործածուին նաեւ վիրաբուժական գործողութիւններու փորձեր կատարելու համար: Վերջերս կատուի մը աղիքներուն վրայ գործողութիւն մը կատարուեցաւ հասկնալու համար թէ աղիքի նուազագոյն երկարութիւնը որչափ պէտք է ըլլայ կարկնաւ ապրելու համար: Կատուին աղիքներէն չորս մասնաչափ կտրուեցաւ առանց ոեւէ փափ պատճառելու:

Քաղեց՝ Տ. Ճ. Խ.

ՆՕԹԵՐ

ՊԱՐԹԸՍԼԻԻ ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Այս գիւղին մէջ աւետարանական շարժումը սկսեւ է 1883 ին, երբ գիւղին բնակչութիւնը տակաւին 15 ընտանիքներէ* կը բաղկանար միայն: Այդ տեւները Այնթապցի Սարգիս Գալֆա տնուն մէկը Պէյլանէն հոս գալով երեք ամիս կը գործէ, քարոզելով տուներու եւ բացօթեայ սեղերու մէջ: Ապա հանգուցեալ Վեր. Յակոբ Գունտագճեան Պէյլանի եկեղեցիին մէջ իբր հովիւ գործած առին յաճախակի այցելութիւններ կը կատարէ գիւղին, եւ հոգեւոր կեանքի տէր անհատներ կը զրկէ քարոզելու համար: Այս վերջիններէն մէկն է Զօրապաճի Մարտիրոս վարժապետ, որ կը յաջողի 10—12 անդամներով Հայ Աւետ. Եկեղեցին կազմակերպել եւ երկու տարի իբր քարոզիչ կը գործէ: Վեր. Յ. Գունտագճեանի զրկած երկրորդ անհատն է Քէսապցի Պետրոս վարժապետ Խնկերեան, որ երեք տարի կը գործէ եւ իրեն կը յաջորդէ նորէն Մարտիրոս վարժապետ, եւ մէկ տարի գործունէութիւն կ'ունենայ: Այս առիւնները 1886 ին եկեղեցական շէնքը կառուցուած է, որուն գետինը նուիրուած է ներկայիս ապրող Յովսէփ Ամին Աւետեանի հօր կողմանէ: Նոյն անհատը Հովսէփի մէջ գտնուող իր տան քարերը եւ տախտակներն ալ շինութեան իբր աստղձ նուիրած է եկեղեցիին: Վեր. Յ. Գունտագճեան գուրտէն 12 օսմ. ոսկի գտնելով օգնած է շինութեան, մնացեալը հայթայթուած է ժողովուրդին կողմանէ: Կապանցի Կարապէտ էֆ. տնուն մէկն ալ կարճատեւումն համար գործած է:

Ժամանակագրական կարգով գործող-

* Ներկայիս ընտանիքներուն թիւն է 33:
Ծ. Խմբ.

ները եղած են հետեւեալները: —

Գասպար վարժապետ Աթթարեան, 1889—90, երկու տարիի չափ:

Գեորգ վարժապետ Գույումճեան, Այնթապցի, 1890—1892:

Թովմաս վարժապետ անուն երկտասարդ մը, տարի մը, 1892—1893:

Գեորգ վարժապետ Գույումճեան տարի մ'ալ գործեր է, բայց 1893—1902 եկեղեցին գրեթէ ամանց գործիչի միտցեր է, այցելուներու և տեղական ոյժերու միջոցաւ կարելի եղած է եկեղեցական պաշտամունքը անխափան շարունակել: Այս միջոցին Քէսապցի Մարիամ վարժուհի Շիւքիւրեան տարի մը գործեր է:

1903 ին Արրահամ խոճա Լեոնեան այս գիւղն ալ կ'այցելէ, և իր միջոցաւ Աստուած հոգեւոր արթնութիւն մը յառաջ կը բերէ:

Սեդրակ էֆ. Էքմէքճեան 1904 ին, մէկ տարի:

Վեր. Թարութիւն Նօխուտեան 1905, այս ատեն դպրոցական չէնք մը շինուած է:

Վեր. Տ. Անգրէասեան (այն ատեն տակաւին աշխարհական) 1909:

Նուարդ Կոստանեան 1910:

Հէլէն Քէչէճեան 1911:

Սեդրակ էֆ. Սուվաճեան, որ Ալեքսանդրէթի մէջ իբր վաճառական զբաղուած ատեն, 1912—1913, շատ մը կիրակիներ գիւղը այցելած և խօսած է, նոյն տարին եկեղեցական չէնք աւելի կանոնաւոր ձեւով վերստին շինուած է, որուն համար 100 օսմ. սոկի ծախսուած է. այս անգամ դուրսէն միայն հինգ ոսկի օգնութիւն մը առնուած է:

Նաղարէթ էֆ. Տարազճեան գործած է 1914—1915 ին:

Սեդրակ էֆ. Աւեսեան 1919 ին տարի մը իբր ուսուցիչ աշխատեր է:

Սամուէլ էֆ. Թողաճեան 1920 ին գործած է:

Նորէն Նաղարէթ էֆ. Տարազճեան 1922—1924 ին:

1924 ի Նոյ. 15 էն ի վեր ստորապրեալս կը գործէ իբր քարոզիչ: Ասկէ քիչ առաջ զպրոցական չէնք մ'ալ շինուած է, շնորհիւ Յովսէփ Ամմի Աւեսեանի նուիրատուութեան:

Կ. ԱԼԹՈՒՆՃԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՀՈԳԻՆԵՐԸ ՓՐԿԵԼՈՒ ՊԱՏՃԱՌ ՄԸ

Եթէ ևս նոյն իսկ վերջին աստիճան անձնասէր ըլլալի և իմ գործէս զատ եւ ոչ մէկ բանով մտահոգուէի պիտի ընտրէի հոգի փրկող մը ըլլալ. քանզի ևս երբէք չեմ գիտեր աւելի կատարեալ, առատաբոյլս, անձառելի, ամենամաքուր և ամէնէն ազնուաշուքիչ տեսակէն երջանկութիւն մը զոր ևս զգայի երբ ևս առաջին անգամ լսեցի թէ մէկը փրկիչը փնտռած և իմ միջոցաւ գտած էր: Ոչ մէկ մայր իր անդրանիկ զատկին ծնունդովը երբէք այնքան չէր ուրախացած, ոչ մէկ կուռող դժուարութեամբ շահուած յաղթանակին վրայ անհուն խնդութեամբ այնչափ չէր լիցուած:

2. ՍՓԸՐՉՃԸՆ

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՀՐԵԱՆԵՐԸ

Գերմանիայէն հրեայ մը սապէս կը գրէ. «Նաւովրեցի Յիսուս Մովսէսէն զատ յառաջ եկած մեծագոյն Հրեաներէն մէկն է: Ան հիմա ազգային հերոս մը դարձած է. թերևս Ան մեծագոյն մարդարէններէն մէկն է, զոր աշխարհ երբէք տեսած ըլլայ: Բայց այն որ ասկէ աւելին կ'ըսէ, և կընդունի թէ Ան Աստուծոյ որդին է, ա'լ հրեայ մը չէ»: Սերունդ մը առաջ Հրեաները երբէք չէին ուզեր Յիսուսի մասին լսել իսկ, հիմա Այն ազգային հերոս մը եւ մեծագոյն մարդարէ մըն է անոնց համար:

ՔՐԻՍՏՈՍԻ ՏԱՌԱՊՈՂ ՍԷՐԸ ԵՒ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԻՐՏԸ

Էտուրրտ Մքաթ անուն միսիօնար մը, Ասամի մէջ, Հնդկաստան, սկսաւ Նախա-
ցելին լեզուն սորվիլ որպէսզի իրմէ հրեք
օրուայ ճամբորդութեամբ հեռու գլտ-
նուող վայրենի լեռնաբնակներուն կարե-
նայ սորվեցնել: Բրիտանական պաշ-
տօնեաները երբ հասկցան թէ միսիօնարը
մտադիր է այդ տեղը այցելել աշխատեցան
իր մտադրութենէն հտ կեցնել, պատմի-
լով իրեն թէ իր կեանքը անպատճառ
մեռնելու վտանգի մէջ կը դնէ: Մքաթ
հաստատ մնաց իր մտադրութեան մէջ:
Նախապես իր իր թարգման ունե-
նալով անոնց գիւղերէն մէկուն մօտե-
ցաւ: Ռազմիկներու խումբ մը երկուսն
եկաւ, որոնք իրենց նիզակները ցուցնե-
լով հրամայեցին որ կենան: Միսիօնար-
ը կեցաւ եւ սկսաւ Նախաներու լեզունով
երգել, «Աւաղ, Փրկիչս արիւն թափեց»,
երգը: Կատաղի մարտիկները իրենց
նիզակները գետինը նետեցին եւ սկսան
մօտիկ ընել մինչ միսիօնարը կ'երգէր
Քրիստոսի տառապանքին եւ փրկութեան
վրայ: Երգը երբ վերջացաւ, խումբին պե-
տը պռռաց. «Այդ երգը մեզի դարձեալ
երգէ, ասկէ առաջ ատոր նման երգ մը
երբէք չենք լսած»:

ԱՆՍԱՍԱՆԵԼԻ

Նաւորդ մը, որ նաւաբեկութի մը
ենթարկուած էր, յաջողեցաւ լողալով
պղտիկ ժայռի մը հասնիլ, որուն ամրա-
պէս փտրած մնաց բոլոր գիշերը մինչեւ
արշալոյս, երբ եզերքէն տեսնուելով ա-
զատուեցաւ: Երբ ցամաք ելաւ իրեն
հարցուցին. «Վախը երբէք քու հոգիդ
չխախտե՞ց»: «Այո», պատասխանեց
ան, «Բայց ժայռը երբէք չսասանեցաւ»
Երբ կեանքի փոթորիկներուն հանդի-
պինք ապահով պիտի ըլլանք եթէ Քրիս-
տոսի փարինք, քանզի Ան է մեր փր-
կիչ թիան միակ անսասանելի ժայռը:

ՔՐԻՍՏՈՆԵՍԱՅ ՀՐԵԱՅԻ ՄԸ
ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԸ

Հրեաներու մէջ գործող միսիօնարա-
կան հաստատութեան մը վարիչը հետե-
եալ պատմութիւնը կը պատմէ:

«Ուրիշ երիտասարդ մ'ալ գալով
խնդրեց որ Տունի մէջ ընդունուի. հայրս
պահ մը վարանեցաւ քանզի բաւական
մեծ էր. հայրս սովորութիւն չունէր 30էն
վեր մարդերը ընդունելու: Բայց երի-
տասարդը շատ թախանձեց, եւ ընդուն-
ուեցաւ: Ինչ վերջը տեսնուեցաւ որ Ա-
ւետարանը շատ շուտ արձագանգ մը
գտաւ իր սրտին մէջ: Երեք ամիս դաս-
տիարակուելէ վերջ ալ պատրաստ էր մը-
կըրտուելու, որ ընդհանրապէս կիրակի եւ
ուրբաթ օրերը կը կատարուէր:

«Կիրակի օրը երիտասարդը իր քրոջ-
մէն նամակ մը ստացաւ, որուն մէջ քոյ-
րը կը զրէր թէ իր մկրտութեան լուրը
լսելուն պէս մայրը հիւանդացաւ ծանր
կերպով, իր հայրը հրաւիրեց իրենց բո-
լոր ազգականները իր անունին թաղումը
կատարելու համար. նամակը այսպէս կը
վերջանար. «հեռագրէ որ չես մկրտուիր,
եթէ մկրտուիս մայրդ պիտի մեռնի եւ
դուն մարդասպան մը պիտի ըլլաս»:

«Երիտասարդը այս նամակը իր քովը
պահեց մինչեւ կիրակի առտու, երբ զայն
իմ հօրս ցուցուց: Այն ատեն երկուքը
միասին ծնրադիր աղօթեցին: Իրիկունը
երիտասարդը աւազանին մօտեցաւ մը-
կըրտուելու համար, բայց թարթիչնե-
րուն վրայ արցունքի խոշոր կաթիլներ
կային. այնքա՛ն սիրելի էին իր տնեցի-
ները իրեն համար»:

«Երիտասարդը տկարակազմ էր, քիչ
վերջը պաղ առնելով հիւանդացաւ: Բը-
ժիշկը յայտնեց թէ հիւանդը հիւժախտէ
վարակուած էր եւ թէ հագիւ երեք ամ-
սուայ կեանք ունէր: Հայրս յարմար
զատեց որ հիւանդին յայտնէ իր կացու-
թիւնը: Երիտասարդը խաղաղ սրտով

լնդունեց այս յայտնութիւնը, և խնդրեց հօրմէս որ իր հայրենիքը երթայ հօրը ընտանիքը այցելելու, ցուցնելու համար անոնց թէ Տէրը ի՛նչ բրած էր իրեն համար:»

«Հիւանդը չորրորդ կարգէ վազանի մէջ երեք օր և երեք գիշեր ճամբորդեց, իրիկունան մօտ երբ կայարան հասաւ տակաւին երթալիք 7 մղոն ճամբայ ունէր, և հեղեղի պէս կ'անձրեւէր: Իրեններուն երբէք լուր չէր տուած իր զաւուստին մասին: Գիշերուան ժամը 10ին հայրենական տան դուռը զարկաւ: Մայրը դուռը բացաւ, բայց դուռը երեսին զարնելով կրկին դռեց և անյայտացաւ:»

«Գրեթէ մեռնելու աստիճանին մէջ էր երբ միսիօնարական Տունը հասաւ: «Ա՛յ տանս մէջ եմ» ըսաւ ան:»

«Հայրս և մայրս անոր անկողնին քով նստած էին: «Դուն երիտասարդ ես և մեռնելու վրայ», ըսաւ հայրս, «ինքզինքդ Յիսուսի տուած ըլլալուդ համար կը յաւի՞ստ»: «Երբէք», պատասխանեց հիւանդը, և խնդրեց մօրմէս որ իր սիրելի երգերէն մէկը երգէ իրեն համար. շատ զօռար է երգել երբ հագազը լեցուն է հեծկատութով: Բայց մայրս երգեց, և մինչ ան կ'երգէր երիտասարդը իր հոգին ասանդեց:»

ՄԻԱԿ ՃԱՄԲԱՆ

Զբօսաշրջիկ մը այսպէս կը պատմէ. «Զուիցերլանդ կատարած մէկ այցելուութեանս միջոցին երբ ցորեկ մը պտըտելու համար ճամբայ ելայ, ինծի ըսուեցաւ թէ պէտք է որոշ ճամբու մը հետեւիմ, անոր դարձուածքներէն դառնամ, բլուրներէն մազլյիւմ և գետակներէն անցնիմ: Եւ երբ միջանի անգամ փորձուեցայ կարճ ուղի մը գտնելու համար այդ ճամբայէն շեղիլ միշտ ալ ստիպուեցայ նորէն անոր վերադառնալ: Վերա-

դարձիս ան ինծի ըսել կ'ուզէր. «Ի՞նչու զիս ձգեցիր. գիտեմ թէ ես քիչ մը կոշտ և խորտուքորտ եմ. բայց ես քեզի համար քեզմէ աւելի լաւ կրնամ ծառայել: Ես միակ կարելի ճամբան եմ: Քայլ առ քայլ մօտէն ինծի հետեւէ, և ես քեզ պիտի առաջնորդեմ քու երթալիք տեղը:» Մենք ալ այսպէս շատ մը զօռարու թիւններու և թշնամիներու կը հանդիպինք. այն ատեն կը լսենք Տէրոջ ձայնը որ կ'ըսէ. «Ինծի նայէ, ինծի հետեւէ»:

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՇԱԲԹՈՒԱՆ ՀԻՒՐԵՐԸ

Մը. Պըրճ, Կ. Պոլսոյ Ամերիկեան Պորտի հրատարակչական մարմինն անգամներէն, և Իզմիրի նախկին միսիօնարներէն մէկը, Օգոս. 20ին Հալէպ գլուխուեցաւ, իր ընտանեօք կատարած պըտոյտէն դէպի Պոլիս վերադարձին առթիւ: Տէր և Տիկ. Պըրճերը եռանդով լծուած էին նոր տառերով թրքերէնը սորվելու և լաւատես զգացումներով տոգորուած թուրքիոյ մասին:

Օգոս. 6ին քաղաքս ժամանեցին Գահրէի Հայ Աւետ. Եկեղեցւոյ քարոզիչը Պատ. Հ. Յ. Համբարձումեան և նոյն եկեղեցիին անգամներէն Տիար Խաչեր Կիւզէլիմեան: Պատուելին դէպի Ամերիկա ուղեւորութեան առթիւ փափաքը ունեցած էր Հալէպէ անցնիլ իր բարեկամները տեսնելու համար: Պատ. Համբարձումեանի եւամսեայ պաշտօնավարութիւնը շատ օգտակար եղած է իր եկեղեցիին մէջ, որ կենսունակութեան զօրաւոր նշաններ սկսած է ցոյց տալ: Ուրախութեամբ տեղեկացանք թէ որոշում մը եղած է եկեղեցական շէնքի մը կառուցման մասին, որուն համար յաջողութիւն կը մաղթենք:

ՀԱՅ ՍԻՆՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ
ՊՈՒԷՆՕՍՍԱՅՐԷՍԻ ՄԷՋ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Պուէնօսս-Սյրէսէն Յուլիս 19 թուակիր
նամակով մը մեզի կը գրեն. —

. . . Ամբողջ Հայ. Աւետ. Եկեղեցւոյ
ուշադրութիւնը, համակրանքը և հե-
տաքրքրութիւնը կը հրաւիրենք այս
տեղ մեր նոր կազմակերպուած Հայ
Աւետ. Ժողովական Եկեղեցւոյն վրայ,
յատ հայ Աւետ. եղբայրութիւնէն. . . :
Եղբայրութեան համակրները իրենց
յատուկ կերպերով միշտ չափաւորու-
թիւն ըրին եկեղեցւոյ, անոր առաջ-
նորդներուն ետեւ ի մասին, որ շատե-
րուն վրայ անախորժ տպաւորութիւն
ըրաւ. ասոնք հակառակեցան Հայ Աւետ.
Ժողովական Եկեղեցւոյ անունը իրենց
վրայ առնելու: Եւ իրենց պէս չխորհող-
ները անուանարկելու և անոնց հան-
դէպ ցուրտ վերաբերմունք ցուցնելու
սկսան: Վերջապէս անանկ մթնոլորտ
մը սկսաւ տիրել որ հոգեւոր ժողովները
իրենց արդիւնաւորութիւնը կորսնցու-
ցին, զգացումները բորբոքեցան: Կա-
ցութիւնը փրկելու, հոգեւոր գործունէ-
ութիւնը շարունակել կարենալու, ան-
մահ հոգիները խաղաղօրէն հոգեւոր սնու-
ցումի ենթարկելու համար, և տարբեր
հոսանքի պատկանող այս երկու կողմե-
րուն ամենաբարձր բարիքին համար,
Ժողովուրդին կարեւոր մէկ մասը զատ-
ուեցաւ և երեք ամիս առաջ Հայ Աւետ.
Ժողովական Եկեղեցին կազմակերպե-
ցինք գործնականապէս և ոչ պաշտօ-
նապէս:

Այս նորակազմ եկեղեցին կիրակի օրը
կ'ունենայ աղօթածողով, Կիրակնօրեայ
Դպրոց, քարոզ, չորեքշաբթի օրը Ս.
Գրքի սերտողութիւն և հինգշաբթի օրը
կանանց ժողով:

Ազատ քաղաքացիներ Չարչա Տիգրանի
գրուածներէն

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐԼԻՈՒ ՈՐԻՆ

Արքունի գլուխը դառնալ սկսաւ.
անծանօթ զգացումներ կ'այրէին իր ու-
ղեղը, ու նոպայէ բռնուած ի մը պէս
մերթ ընդ մերթ սարսուռներ կ'ունենար:
«Աւա՛ղ, ի՞նչ կ'ուզեմ ինձմէ» աղաղա-
կեց վերջապէս:

— Շատ բան:

Մտովի ձայնն էր, տարակոյս չը կար:

— Ո՞վ ես դուն: Ըսաւ Սքրուն:

— Հարցուր թէ ասեմօք ո՞վ էի:

— Ուրեմն ո՞վ էիր, հարցուց Սքրուն,
ու կամայ կամայ ձայնը բարձրացնելով՝
չո՞ք, հոգի՞, ի՞նչ ես դուն:

— Տակաւին չը մեռած ես քու ընկերդ
էի, ծէյքը պ'առաւ:

— Կրն՞աս նստիլ, , հարցուց Սքրուն
տարակուսանքով անոր նայելով:

— Կրնամ:

— Ուրեմն կ'աղաչեմ նստէ: Սքրուն
խորհելով որ այսքան թեթեաշարժ ու
թափանցիկ բան մը աթոռի մը վրայ չէր
կարող նստիլ, կը փափաքէր այս կերպով
տեսնել թէ ովին ինչ պիտի ընէր: Սա-
կայն ովին աթոռին վրայ նստաւ. խիստ
բնական կերպով մը, ու հիմա կրակա-
րանին քով դէմ գիմաց նստած էին Սք-
րուն և ովին:

— Կ'երեւի թէ իմ իրականապէս ովի
մը ըլլալուն չես հաւատար, ըսաւ ովին:

— Ձեմ հաւատար, ըսաւ Սքրուն:

— Ի՞նչ ապացոյց կ'ուզէք որ տամ իմ
ճշմարտապէս ովի մը ըլլալուն:

— Ձեմ պիտեմ, ըսաւ Սքրուն:

— Ինչո՞ւ կը տարակուսիս քու զգա-

ցումներուդ վրայ, հարցուց ոգին:

—Որովհետեւ, ըսաւ Սքրուճ, փոքր բան մը կրնայ ազդել անոնց, ստամոքսի փոքր խանգարում մը կրնայ զգացմանց վրայ մեծ խաբկանքներ յառաջ բերել: Թերեւս դուն չըմարտուած խոյի միսի մը հետեւանքն ես, կամ քիչ մը չափէն աւելի մանանեխի արդիւնքը, կտոր մը պանիրի, կամ լաւ չեփած գետնախնձորի շինած տեսիլքը: Ե՞վ գիտէ ինչ ես, ե՞վ գիտէ ինչպէս յառաջ եկար:

Ասոր վրայ ոգին սարսափելի աղաղակ մ'արձակեց, ու իր շղթան շարժելով այնքան տխուր ու սահմակեցուցիչ տպաւորութիւն մ'ըրաւ որ Սքրուճ չը նեղուելու համար իր աթոռին փաթթուեցաւ: Սակայն որքա՛ն վարհուրեցաւ երբ տեսաւ որ ոգին իւր կզակին վրայի ճերմակ լաթը քակածին պէս ծնօտը կուրծքին վրայ ինկաւ:

Սքրուճ ծունկերուն վրայ գետինն ինկաւ, ու ձեռքերը միացուցած աղաչական ձայնով մը «ո՛հ, գթա՛ ինձ, գթա՛ ինձ, ինչո՞ւ գիտ կը չարչարես», գոչեց: —Ով աշխարհական մտայնութիւն ունեցող մարդ, պատասխանեց ոգին, հիմայ իմ իրական ոգի մը ըլլալուս հաւատացի՞ր թէ ոչ:

—Ո՛հ, այո հաւատացի, ինչպէ՞ս չը հաւատամ, աղերսեց Սքրուճ, սակայն կ'աղաչեմ, ինչո՞ւ համար ոգիները աշխարհ կուգան, և ինչո՞ւ ինծի կերելին:

—Ամէն մարդէ կը պահանջուի, պատասխանեց ոգին, որ իր հոգին իր ընկեր արարածներուն մէջ պտըտի, ու բնաւ չի կենայ, շարունակ պտըտի, և եթէ այդ հոգին իր ապրած ատենը անիկայ չընէր, կը դատապարտուի զայն ընել իր մահէն վերջ: Ա՛հ, ես դատապարտուած եմ աշխարհը շրջելու, ան ալ սա անտանելի շղթայովս, որ աւա՞ղ, աշխարհի վրայ շատերը կրնար երջանկացնել, իսկ հիմա միայն իմ չարչարանքս կ'աւելցնէ:

Ու ոգին անգամ մ'եւս աղաղակեց, իր

շղթան շարժեց, ու գալարեց իր ստուերի նման ձեռքերը:

—Ինչո՞ւ համար շղթայուած ես, հարցուց Սքրուճ զողալով:

—Ես կապուած եմ այննոյն շղթայով՝ զոր ես շինեցի երբ կ'ապրէի, պատասխանեց ոգին, անոր ամէն մէկ օղակը եւ շինեցի, ու շարունակ շինեցի մինչև որ այսքան երկար շղթայ մը եղաւ, յետոյ ես իմ ձեռքովս զայն իմ մէջքս կապեցի, ու ապա կամքովս զայն անցուցի վիզս: Այդ շղթային տեսքը քեզի տարօրինակ կը թուի:

Սքրուճի զոզն ու սարսափը երթալով կ'աւելնար:

—Կ'ուզե՞ս գիտնալ, շարունակեց ոգին, ծանրութիւնն ու երկայնութիւնը այն շղթային՝ որով այժմ դո՛ւ կապուած ես, ասկէ եօթը Ծնունդ առաջ քու շղթայ ճիշդ իմինիս չափ ծանր ու երկայն էր, անկէ իվեր շատ աւելցուցիր եւ, ու այժմ քուկդ շատ աւելի ծանր է քան զայս:

Սքրուճ իր շուրջը ու գետինը նայեցաւ ինքզինքը յիսուն վաթսուն կանգուն երկայն շղթայով մը կապուած տեսնելու ակնկալութեամբ, բայց ոչինչ տեսաւ:

—Ճէշքը պ, ըսաւ աղաչելով. իմ վաղեմի ձէշքը պ Մարլիս, շարունակէ կաղաչեմ, խօսէ, բայց մխիթարական խօսք մը խօսէ:

—Քեզի համար մխիթարական խօսք չունիմ, պատասխանեց ոգին, մխիթարութիւնը ուրիշ կողմէ կուգայ, Սքրուճ, և ուրիշ անձերու միջոցաւ կը հաղորդուի, բայց ո՛չ քեզի, այլ տարբեր տեսակ մարդոց:

(Շարունակելի) (7)

قسيس قربت هاروتونيان

صاحب الامتياز

ديقران ج. خرويان

مدير المسؤول